Թողարկման 18-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

ա պ ր ի լ

թիվ 4 (152)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-111-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Գրիար Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի լիցենզիան և «Ալֆա Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Գարանտ-Լիմենս» և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ներին նոր դասերով լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՎՏԲ - Հայաստան բանկ» ՓԲԸ-ին «Մաստեր Քարդ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, «ԱԿԲԱ ապահովագրական բրոքեր» ՓԲԸ-ի ապահովագրական բրոքերային գործունեության և «Խավ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Ֆաստ-Կրեդիտ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Գրիար-Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ի մի շարք մասնաճյուղեր գրանցումից հանելու, «Կամուրջ» և «Բլեսս» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ների, ինչպես նաև «Յունիբանկ» և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ների մի շարք մասնաճյուղեր և ներկայացուցչություններ գրանցելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մի շարք ՓԲԸ-ների, ՍՊԸ-ների և արտարժույթի փոխանակման կետերի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 90Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 94-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 95-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

11 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի «ժա» կետը և 53-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը «դրոշմվածքը» բառերից հետո լրացնել «(ընկերության ցանկությամբ)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի «ժա» կետը «դրոշմվածքը» բառից հետո լրացնել «(ընկերության ցանկությամբ)» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան

30 ապրիլի 2011 թ., Երևան, ՀՕ-111-Ն

** ՀՀՊՏ 2001 N 34 (166), 06.11.01:*

*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2011 թվականի ապրիլի 13-ին (ՀՀՊՏ N 26 (829), 11.05.11):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Գրիար Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության լիցենզիան և «Ալֆա Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիան (որոշումներ թիվ 92Ա, 93Ա):

- ***«Օդանավերի ապահովագրություն» և «Օդանավերի (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն» դասերով լիցենզիաներ են տրամադրվել*** «Գարանտ-Լիմենս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 100Ա):

- ***Ոչ կյանքի ապահովագրության «Վարկի ապահովագրություն» դասով լիցենզիա է տրամադրվել*** «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 101Ա):

- ***«Մաստեր Քարդ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 105Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱԿԲԱ ապահովագրական բրոքեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ապահովագրական բրոքերային գործունեության, ինչպես նաև «Գոլդեն Ֆյուչեր» և «Խավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատան կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 107Ա, 109Ա, 110Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Ֆաստ-Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 111Ա):

- ***Գրանցվել է*** «Գրիար-Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Գեղարքունիք», «Լոռի», «Հյուսիսային», «Տավուշ», «Արցախ», «Սյունիք» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/314Ա):

- ***Գրանցվել են*** «Կամուրջ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վանաձոր», «Գյումրի» և «Իջևան» մասնաճյուղերը, «Բերդ», «Նոյեմբերյան», «Մարտունի», «Գորիս» և «Սիսիան» ներկայացուցչությունները, ինչպես նաև «Բլեսս» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ստեփանակերտ», «Յունիբանկ» և «Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունների «Օպերա» և «Ագարակ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/351Ա, 1/380Ա, 1/381Ա, 1/417Ա, 1/429Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 արտարժույթի փոխանակման կետերի, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/393Ա, 1/394Ա, 1/408Ա, 1/421Ա, 1/427Ա) և մի շարք փակ բաժնետիրական ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1800000 դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/306Ա, 1/307Ա, 1/316Ա, 1/358Ա, 1/372Ա, 1/398Ա, 1/412Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 90Ա որոշմամբ 2011 թ. ապրիլի 13-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8.50%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 11.50%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.50%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 2) 28.1-րդ կետի «ե» պարբերության մեջ «իսկ ֆինանսական լիզինգի պայմանագրի խզման դեպքում՝ դրա հետևանքով վարձատուի հաշվեկշռում հիմնական միջոցները ճանաչելու օրվանից վեց ամիս հետո» բառերը փոխարինել «իսկ ակտիվը ֆինանսական լիզինգով տրամադրվելու նպատակով ձեռք բերվելու կամ ֆինանսական լիզինգի պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում՝ այդ ակտիվը բանկի սեփականությունը համարվելու (վարձատուի հաշվեկշռում որպես հիմնական միջոց ճանաչվելու) օրվանից մեկ տարի հետո» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշումը չի տարածվում Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի «ե» պարբերությամբ սահմանված այն նյութական ակտիվների վրա, որոնք ձեռք են բերվել բանկի կողմից հետագայում ֆինանսական լիզինգով տրամադրվելու նպատակով կամ ֆինանսական լիզինգի պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում ճանաչվել են որպես հիմնական միջոց բանկի հաշվեկշռում սույն որոշումն ուժի մեջ մտնելուց առաջ և սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի «ե» պարբերությամբ սահմանված կարգով ենթակա են պակասեցման բանկի հիմնական կապիտալից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 ապրիլի 2011 թ., N 94-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. ապրիլի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.04.2011 թ. (ՀՀՊՏ N10 (393), 4.05.2011):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ««Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 14) 16.2.5-րդ կետում «, իսկ ֆինանսական լիզինգի պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում՝ դրա հետևանքով վարձատուի հաշվեկշռում հիմնական միջոցները ճանաչելու օրվանից վեց ամիս հետո» բառերը փոխարինել «օրվանից վեց ամիս հետո, իսկ ակտիվը ֆինանսական լիզինգով տրամադրվելու նպատակով ձեռք բերվելու կամ ֆինանսական լիզինգի պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում՝ այդ ակտիվը վարկային կազմակերպության սեփականությունը համարվելու (վարձատուի հաշվեկշռում որպես հիմնական միջոց ճանաչվելու) օրվանից մեկ տարի հետո» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշումը չի տարածվում Կանոնակարգ 14-ի 16.2.5-րդ կետով սահմանված այն նյութական ակտիվների վրա, որոնք ձեռք են բերվել վարկային կազմակերպության կողմից հետագայում ֆինանսական լիզինգով տրամադրվելու նպատակով կամ ֆինանսական լիզինգի պայմանագրի լուծման կամ ավարտի դեպքում ճանաչվել են որպես հիմնական միջոց վարկային կազմակերպության հաշվեկշռում սույն որոշումն ուժի մեջ մտնելուց առաջ և սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Կանոնակարգ 14-ի 16.2.5-րդ կետով սահմանված կարգով ենթակա են պակասեցման վարկային կազմակերպության հիմնական կապիտալից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 ապրիլի 2011 թ., N95-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2011 թ. ապրիլի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.04.2011 թ. (ՀՀՊՏ N10 (393), 4.05.2011):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի մայիսի 10-ի նիստի «2011 թվականի մայիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2011 թվականի մայիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 15

Իրական հատվածի ցուցանիշներ 18

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 21

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների ու պարտավորությունների արժութային կազմը

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրքը

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 26

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 27

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ֆինանսական համակարգի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 39

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ ոլորտների

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 58
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ՀՀ դրամով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի արտարժույթով վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումները ՀՀ արդյունաբերության ճյուղերում
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտ տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ ոլորտների
Առևտրային բանկերի ավանդներ 69
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 71
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 77
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնությունները արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (10.05.2011)

2011 թվականի մայիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2011 թվականի մայիսի 10-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Դարբինյանը, Ա. Նորեկյանը, Ա. Չիլինգարյանը, Ա. Մկրտչյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: 2011 թվականի ապրիլին դիտվել է 12-ամսյա գնաճի կտրուկ՝ 2.6 տոկոսային կետով նվազում, ինչի արդյունքում այն կազմել է 8.9%: Չնայած դրան, գնաճի կառուցվածքում պահպանվել է պարենային ապրանքների գների աճի գերակշռող ազդեցությունը. նպաստումը ապրիլի 12-ամսյա գնաճին կազմել է 7.8 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2011 թվականի ապրիլին նախորդ ամսվա համեմատությամբ արձանագրվել է 0.2% գնանկում, որին բացառապես նպաստել է պարենային ապրանքների գների 0.5%-ով նվազումը (նպաստումը գնանկմանը՝ 0.3 տոկոսային կետ). այդ թվում՝ 5.3%-ով նվազել են «Բանջարեղեն և կարտոֆիլ» և 1.8%-ով՝ «Միրգ» ապրանքախմբերի գները: Ոչ պարենային ապրանքների գները բարձրացել են 0.5%-ով (նպաստումը գնաճին՝ 0.1 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված բենզինի և դիզելային վառելիքի գների համապատասխանաբար 3.9% և 5.8% աճով: Ծառայությունների սակագները ամսվա ընթացքում մնացել են անփոփոխ:

2011 թ. ապրիլին միջազգային ապրանքային շուկաներում կրկին դրսևորվել են գնաճային միտումներ: Հումքային ապրանքների շուկայում նավթի և ոսկու միջազգային գներն ամսվա ընթացքում աճել են համապատասխանաբար 7.5%-ով և 4.4%-ով: Թեև Պարենի և գյուղատնտեսության համաշխարհային կազմակերպության պարենային ապրանքների գների ինդեքսն ապրիլին, նախորդ ամսվա համեմատությամբ, մնացել է գրեթե անփոփոխ, այնուամենայնիվ, պարենային ապրանքների շուկայում ևս դիտվել են գնաճային միտումներ, մասնավորապես՝ հացահատիկի միջին ամսական գինն աճել է 6.1%-ով: Հումքային և պարենային ապրանքների միջազգային գների աճի պայմաններում ԱՄՆ-ում ձևավորված գնաճային սպասումների, ինչպես նաև ԱՄՆ տնտեսության ակտիվության գնահատման որոշակի անկման հետ կապված՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքը միջազգային ֆինանսական շուկաներում ապրիլին ցուցաբերել է արժեզրկման միտումներ՝ եվրոյի նկատմամբ արժեզրկվելով շուրջ 3.2%-ով:

Հաշվի առնելով ԱՎԾ կողմից հրապարակված 2011 թ. առաջին եռամսյակի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ)[1] ՀՆԱ-ի աճի տեմպը մարտի վերջին գնահատվել է 2.7%՝ պայմանավորված արդյունաբերության, շինարարության ճյուղերում և ծա-

[1] *ՏԱՑ-ը, ի տարբերություն ՀՆԱ ցուցանիշի, հաշվարկվում է տնտեսական գործունեության տեսակների թողարկման ծավալների, ոչ թե ավելացված արժեքների ծավալների հիման վրա և չի ներառում արտադրանքի զուտ հարկերն ու ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունները: Նշված ցուցանիշի վերաբերյալ տե՛ս 2011 թվականին ԱՎԾ կողմից հրապարակված «Տարվա ընթացքում ընթացիկ մակրոտնտեսական ցուցանիշների հավաքագրման, ամփոփման և հրապարակման ածողական մեթոդից դիսկրետ (զուտ ամսական) մեթոդին անցման մասին» մամուլի հաղորդագրությունը:*

ռայությունների ոլորտում ավելացված արժեքների գնահատված՝ համապատասխանաբար 5.9%, 5.5% և 2.9% աճով: Գյուղատնտեսության ճյուղում գնահատվում է ավելացված արժեքի 1.0%-ով նվազում, որը անասնապահության և բուսաբուծության ենթաճյուղերում, թողարկման ծավալների անփոփոխ մակարդակի պահպանման պարագայում, պայմանավորված է ձվի արտադրության ծավալների անկմամբ: Այդուհանդերձ, պահպանվում են մինչև տարեվերջ ճյուղում թողարկման ծավալների աճի ակնկալիքները:

Ինչ վերաբերում է արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, ապա առաջին եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման արժեքային աճը գերազանցել է սպասումները՝ ըստ գնահատումների արձանագրելով տ/տ 20.2% աճ. ապրանքների և ծառայությունների ներմուծման արժեքն աճել է տ/տ ընդամենը 5.1%-ով:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի ապրիլի զարգացումները: Մարտին բնականոն միտումից շեղված նվազումից հետո ապրիլին ՊՊ առաջնային շուկայում մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ պարտատոմսերի միջին տոկոսադրույքն աճել է 2.1 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 9.0%: Ռեպո շուկայում միջին տոկոսադրույքը մարտի համեմատությամբ աճել է 1.0 տոկոսային կետով՝ կազմելով 9.3%, իսկ միջբանկային ռեպո շուկայում միջին տոկոսադրույքն աճել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 8.3%:

2011 թ. ապրիլին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը, նախորդ ամսվա համեմատ, դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.4%-ով՝ կազմելով 373.6 դրամ, եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 4.6%-ով՝ կազմելով 540.9 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 2.9%-ով՝ կազմելով 13.3 դրամ:

Դրամավարկային ցուցանիշների ապրիլին արձանագրված միտումները հիմնականում համահունչ էին դրամավարկային քաղաքականության վերջին ծրագրով երկրորդ եռամսյակի համար նախանշված ուղղություններին: Ամսվա ընթացքում փողի զանգվածն աճել է 0.7%-ով՝ պայմանավորված շրջանառությունում գտնվող կանխիկի և արտարժութային ավանդների 2.0-ական տոկոս աճով, որը հիմնականում չեզոքացվել է դրամային ավանդների 3.3% նվազմամբ՝ հանգեցնելով դրամային զանգվածի 0.4% նվազման: Ապրիլին պահպանվել են բանկային համակարգի կողմից տնտեսության վարկավորման բարձր աճի տեմպերը՝ շուրջ 3.0%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Խորհուրդն արձանագրեց, որ, չնայած հետագա ռիսկերի պահպանմանը, ապրիլին պարենային և հումքային ապրանքների միջազգային շուկաներում նկատվել են գների կայունացման միտումներ:

Խորհուրդը միակարծիք է, որ գնաճի վրա ազդեցության տեսանկյունից տնտեսության ներքին հատվածից եկող ազդակները առավելապես չեզոք են: Իրականացվելիք հարկաբյուջետային քաղաքականությունը և մասնավոր ծախսումները որոշակիորեն կզսպեն ներքին պահանջարկը: Գյուղատնտեսության ճյուղում, ներկա բնակլիմայական պայմաններում և իրականացվող միջոցառումների արդյունքում, ակնկալվում են այդ ճյուղի առաջարկի ավելացման հաշվին տեղական արտադրության պարենային ապրանքների գնանկումային միտումներ:

Հաշվի առնելով վերը նկարագրված միջավայրը, որը հիմնականում փաստում է առաջիկա ժամանակահատվածի համար գնաճային ռիսկերի զգալի մեղմման հանգամանքը, և իրատեսական համարելով այն, որ տարեսկզբից իրականացված դրամավարկային պայմանների խստացման արդյունքում ձևավորված տոկոսադրույքները կնպաս-

տեն 2011 թվականի երկրորդ կեսից գնաճի արագ նվազմանն ու կանխատեսվող հորիզոնում 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում ձևավորմանը՝ ԿԲ խորհուրդը ձեռնպահ մնաց դրամավարկային պայմանների փոփոխությունից:

2011 թվականի մայիսի 10-ի նիստում Խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով 8.5% մակարդակ, լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքների համապատասխանաբար՝ 11.5% և 5.5% մակարդակներ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2011թ. մարտ*	*2011թ. մարտի իրական աճի հիմքքսը 2010թ. մարտի նկատմամբ (%)*	*2011թ. ապրիլ*	*2011թ. ապրիլի իրական աճի հիմքքսը 2010թ. ապրիլի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	100.3	-	107.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	76904.6	105.9	75019.4	111.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	603.8	107.8	584.9	104.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	24524.6	98.0	35466.1	100.6
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	143391.4	105.0	144974.0	100.2
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	23363.0	94.8	23323.4	116.9
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	65167.4	92.7	68180.2	109.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	111485[2]	94.2[1]	110593[2]	96.6[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1177.4	-	1206.5	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	76.5	-	76.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	6.6	-	6.6	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2011 թ.	*Սպառողական գների հիմքքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հիմքքս*	*Գների հիմքքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հիմքքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.4[1]	102.3	98.0	102.0
Փետրվար	100.9[1]	103.3	103.6	103.4
Մարտ	100.8	99.4	87.4	102.8
Ապրիլ	99.8	100.3	104.2	102.0
2011 թ. հունվար – ապրիլը 2010 թ. հունվար – ապրիլի համեմատությամբ	110.5	113.9	102.9	139.6

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2009*	*2010*	*2011*	*2011*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.2	1.7	3.4[1]	3.4[1]	10.3[1]
Փետրվար	-1.8	0.3	0.9[1]	0.9[1]	11.4[1]
Մարտ	1.4	0.8	0.8	0.8	11.5
Ապրիլ	3.2	1.3	-0.2	5.0	8.9
Մայիս	1.6	1.0			
Հունիս	-0.3	-0.8			
Հուլիս	-2.7	-0.8			
Օգոստոս	-0.4	1.3			
Սեպտեմբեր	0.7	-0.2			
Հոկտեմբեր	0.5	1.0			
Նոյեմբեր	1.2	1.6			
Դեկտեմբեր	2.0	1.8			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	6.5	9.4			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.4	8.2			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅՄԲԵՐԸ[2]

Անվանում	*2011 թ. ապրիլը 2010 թ. ապրիլի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)[2]*
ՍԳԻ	**99.8**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**99.5**	**-0.27**
Կենդանական և բուսական յուղեր	103.4	0.11
Շաքարավազ	104.2	0.05
Սուրճ, թեյ, կակաո	100.9	0.03
Կաթնամթերք	100.5	0.02
Հացամթերք	100.1	0.01
Մսամթերք	100.1	0.01
Միրգ	98.2	-0.07
Բանջարեղեն և կարտոֆիլ	94.7	-0.33
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.5**	**0.08**
Կոշկեղեն	103.4	0.06
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	102.3	0.06
Գեղահարդարման ապրանքներ	98.6	-0.03
Ծառայություններ, որից՝	**100.0**	**0.00**
Տրանսպորտի	101.7	0.06
Հանգստի կազմակերպման	104.90	0.03
Կրթության համակարգի	93.60	-0.07
Բնակարանային, կոմունալ	99.60	-0.05

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	*2008*	*2009*	*2010*	*2011*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.40	-0.29	0.48	0.77[4]
Փետրվար	0.83	-0.53	0.74	0.45[4]
Մարտ	0.66	1.14	0.82	0.70
Ապրիլ	1.26	1.46	0.70	0.44
Մայիս	0.55	0.41	0.04	
Հունիս	0.30	0.25	-0.22	
Հուլիս	0.02	-0.22	-0.42	
Օգոստոս	0.06	0.37	0.17	
Սեպտեմբեր	0.48	0.72	0.63	
Հոկտեմբեր	0.10	0.48	1.21	
Նոյեմբեր	0.25	0.62	1.18	
Դեկտեմբեր	0.08	0.61	0.63	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.91	4.63	6.20	6.74[4]
Փետրվար	3.77	3.02	7.59	6.19[4]
Մարտ	4.54	3.33	7.14	6.18
Ապրիլ	5.66	3.47	6.35	5.76
Մայիս	5.94	3.37	5.92	
Հունիս	6.47	3.36	5.40	
Հուլիս	6.75	3.20	5.16	
Օգոստոս	6.97	3.52	4.96	
Սեպտեմբեր	6.99	3.71	4.86	
Հոկտեմբեր	6.21	4.16	5.53	
Նոյեմբեր	5.56	4.72	6.16	
Դեկտեմբեր	5.37	5.25	6.26	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	*Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)*
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**5.76**
Տավարի միս	0.9
Պանիր տնական (կովի կաթից)	0.7
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.4
Պանիր «Չանախ»	0.3
Ձու	0.3
Կարագ	0.3
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.3
Պանիր «Լոռի»	0.2
Բուսական յուղ (արևածաղկի)	0.2
Բենզին	0.1
Աղացած միս	0.1
Մակարոն	0.1
Աղացած սև սուրճ	0.1
Շաքարավազ	0.1
Ծառայություններ նախադպրոցական կրթության՝ մանկապարտեզի վարձ	-0.1

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[3] ԱՎԾ տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ հաշվարկներ՝ «Արտաքսման և ճշգրտման» եղանակով:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2011 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – մարտը 2010 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*2011 թ. հունվար - ապրիլ (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – ապրիլը 2010 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	262.5	131.6	373.4	128.3
Ներմուծում *(ՍԻՖ)*	871.1	108.9	1209.5	110.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	608.6	101.3	836.2	104.6

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – ապրիլ			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	232880	41156	191724	1114114	172036	942078
ԱՄՆ	39048	34122	4926	124426	108425	16001
Ուկրաինա	5505	7886	-2381	20197	20724	-527
Ղազախստան	4578	839	3738	19845	3082	16763
Գերմանիա	7113	5347	1766	21175	23861	-2686
Իսպանիա	1998	2537	-540	8368	10834	-2466
Ֆրանսիա	4250	2707	1543	17062	18774	-1711
ԱՄԷ	4733	18374	-13640	26198	55500	-29303
Չինաստան	640	22360	-21720	2068	80011	-77943
Թուրքիա	885	10188	-9303	2639	40547	-37909
Այլ երկրներ	65382	42920	22462	270964	197761	73203
Ընդամենը	**367011**	**188435**	**178576**	**1627056**	**731555**	**895500**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	89387	13777	75610	295502	47842	247660
ԱՄՆ	8562	6492	2071	35505	33797	1708
Ուկրաինա	2392	2077	315	6571	7240	-670
Ղազախստան	1844	139	1705	6385	965	5419
Գերմանիա	1801	2386	-585	7208	7656	-448
Իսպանիա	765	503	263	2848	2667	180
Ֆրանսիա	1530	1335	195	5509	4423	1086
ԱՄԷ	2126	4572	-2446	7385	18634	-11249
Չինաստան	124	6212	-6088	1179	21737	-20558
Թուրքիա	214	2781	-2567	973	11026	-10053
Այլ երկրներ	24262	13229	11033	90694	58681	32013
Ընդամենը	**133009**	**53504**	**79505**	**459758**	**214669**	**245089**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2010 թվական					
	Հունվար – ապրիլ			Հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	222747	32308	190439	1062266	116950	945316
ԱՄՆ	19677	7655	12022	67789	24554	43235
Ուկրաինա	5446	4641	805	19290	13433	5857
Ղազախստան	4082	247	3836	18434	1021	17414
Գերմանիա	3664	1800	1864	10586	5346	5240
Իսպանիա	1709	551	1158	7232	2286	4946
Ֆրանսիա	2588	933	1655	9443	3731	5712
ԱՄԷ	962	2533	-1571	3581	6904	-3323
Չինաստան	175	1820	-1645	789	5970	-5181
Թուրքիա	348	1961	-1614	1182	6246	-5064
Այլ երկրներ	27108	10054	17054	93144	35323	57821
Ընդամենը	288505	64502	224003	1293736	221763	1071973

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Ապրիլ			Հունվար – ապրիլ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	86241	11427	74814	281767	38910	242858
ԱՄՆ	4862	1727	3135	22897	8353	14544
Ուկրաինա	2173	1362	811	6034	4802	1232
Ղազախստան	1791	139	1652	6039	657	5382
Գերմանիա	810	562	248	3489	1879	1610
Իսպանիա	668	193	475	2477	930	1547
Ֆրանսիա	872	523	350	3360	1535	1825
ԱՄԷ	257	517	-261	909	1789	-879
Չինաստան	23	475	-452	158	1793	-1635
Թուրքիա	69	288	-218	377	1444	-1067
Այլ երկրներ	7919	2567	5352	29538	11199	18339
Ընդամենը	105685	19779	85906	357046	73290	283755





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ[1,2]

2010	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս[3]	Հ[3]	Ն[3]	Դ[3]
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	124.6	125.9	121.5	122.8	132.0	137.8	135.7	135.7	135.0	132.3	134.9	138.8
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	214.3	217.3	209.5	209.8	223.4	235.0	233.1	231.4	232.5	227.1	228.9	232.8
2011	**Հ[3]**	**Փ[3]**	**Մ[3]**	**Ա[3]**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	139.4	137.4	133.4	128.5								
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	228.0	224.6	218.8	211.4								

[1] 2009 թ. հունվարից հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով:
[2] 2009 թ. օգոստոսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը (նախկինում՝ 2000թ.=100)
[3] Ըստ ԿԲ նախնական գնահատումների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011			
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**
Համախառն միջազգային պահուստներ	**1865.8**	**1817.0**	**1789.9**	**1823.4**	**1765.3**
Ոսկի	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	33.5	34.0	31.3	31.5	27.4
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1832.3	1783.0	1758.6	1791.9	1738.0

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2010	2011			
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա
Համախառն արտաքին պարտավորություններ	**699.9**	**710.5**	**714.2**	**721.7**	**734.1**
ԱՄՀ վարկ	487.9	495.3	497.5	502.3	509.1
ՀՓԻ տեղաբաշխում	135.6	137.6	138.5	139.6	142.7
Այլ վարկեր	75.9	77.3	77.9	79.3	81.6
Այլ պարտավորություններ	0.5	0.4	0.4	0.4	0.7

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*


[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	ընդամենը	կենտրոնական կառավարման կապիտալ հաշիվներ և ակտիվներ ոչ ֆինանսական	կենտրոնական կառավարման ընթացիկ հաշիվներ	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2010								
Դեկտեմբեր	12124	12124	106544	672	1	515	107733	**-95609**
2011								
Հունվար	12236	12236	135069	3168	1	515	138753	**-126517**
Փետրվար	13101	13101	112661	3238	1	521	116421	**-103320**
Մարտ	13608	13608	101877	3334	1	524	105736	**-92128**
Ապրիլ	15806	15806	99035	3458	2	525	103020	**-87214**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Արտարժույթով ավանդներ (դրամով մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատիկ [5]	Դրամային բազմապատիկ [6]
2010										
Դեկտեմբեր	507552	304324	128365	432689	88944	521633	389753	911386	1.80	1.27
2011										
Հունվար	463214	275472	112972	388444	93352	481796	394639	876435	1.89	1.26
Փետրվար	482014	276563	117936	394500	100647	495147	399295	894442	1.86	1.21
Մարտ	506325	278219	126771	404990	103198	508188	417671	925859	1.83	1.22
Ապրիլ	499650	285286	114356	399642	107185	506827	416526	923353	1.85	1.18

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
540000
450000
360000
270000
180000
90000
0
08
09
10
11
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
05
06
07
08
09
10
11


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
05
06
07
08
09
10
11


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2010					
Հունվար	457685	259472	358736	416745	786819
Փետրվար	454592	263807	364495	426307	813713
Մարտ	481743	268524	362690	427897	826030
Ապրիլ	487664	269934	371903	435175	816383
Մայիս	468045	268863	374829	439881	809663
Հունիս	451251	270570	377333	445295	803968
Հուլիս	440056	266369	368734	439485	797370
Օգոստոս	435927	261879	368202	436157	789543
Սեպտեմբեր	431419	265420	373200	443501	801256
Հոկտեմբեր	435123	265816	374426	448448	813070
Նոյեմբեր	446763	269424	382503	458349	829154
Դեկտեմբեր	454628	276953	396429	477786	861865
2011					
Հունվար	462951	283399	399807	488359	883590
Փետրվար	485483	287137	404007	502933	901074
Մարտ	510185	300499	429155	536767	937147
Ապրիլ	514455	301550	423441	531265	941328

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011			
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***453765***	***427700***	***414080***	***421131***	***387728***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***53787***	***35514***	***67934***	***85194***	***111921***
Կառավարություն	-95609	-126517	-103320	-92128	-87214
Բանկեր	57425	67249	67799	67220	88139
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	8023	6040	6035	5034	20613
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-12103	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	91971	94782	103455	110102	110996
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***507552***	***463214***	***482014***	***506325***	***499650***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	348165	312940	312393	312420	319858
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	57516	66614	94205	96027	103107
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	88237	70189	62502	82272	63722
Այլ հաշիվներ	13635	13471	12914	15606	12962
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	3906	3664	3324	8590	6125
Այլ հաշիվներ (արտարժույթով)	9729	9807	9590	7017	6837
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-26065***	***-13620***	***7052***	***-33403***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-18273***	***32420***	***17260***	***26727***
Կառավարություն	-	-30908	23197	11193	4914
Բանկեր	-	9824	550	-580	20919
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-1983	-5	-1001	15579
ավանդներ (-)	-	-12103	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	2811	8673	6647	895
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-44338***	***18800***	***24312***	***-6676***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-35225	-547	27	7438
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	9098	27591	1822	7080
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-18047	-7687	19770	-18550
Այլ հաշիվներ	-	-164	-557	2692	-2644
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-241	-340	5266	-2465
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	78	-217	-2573	-180
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-5.7***	***-3.2***	***1.7***	***-7.9***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-34.0***	***91.3***	***25.4***	***31.4***
Կառավարություն	-	-32.3	18.3	10.8	5.3
Բանկեր	-	17.1	0.8	-0.9	31.1
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	3.1	9.2	6.4	0.8
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-8.7***	***4.1***	***5.0***	***-1.3***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-10.1	-0.2	0.0	2.4
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	15.8	41.4	1.9	7.4
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-20.5	-11.0	31.6	-22.5
Այլ հաշիվներ	-	-1.2	-4.1	20.8	-16.9

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ՁՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ՁՄՊ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՍԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-229981**	**-213566**	**-227207**	**-257402**	**-258953**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	116970	135050	139764	122882	135571
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-334274	-331946	-347569	-363026	-376647
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-12678	-16670	-19403	-17258	-17877
ԶՆԱ	**823007**	**806569**	**835898**	**893322**	**886732**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	44671	43177	38039	40978	36341
Պահանջներ Կառավարության նկատմամբ	126027	128142	123009	126234	124173
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-81357	-84965	-84970	-85256	-87833
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	132318	107261	124915	145656	116189
Պահանջներ ԿԲ նկատմամբ	201453	174044	192190	212227	203486
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-69135	-66782	-67276	-66571	-87297
Տնտեսություն	921781	928020	954392	997174	1027111
Ձեռնարկություններ	516270	537700	554747	587393	604417
Դրամով	140914	141458	144045	142151	142620
Արտարժույթով	372274	393172	407609	442132	458667
Արժեթղթեր	3081	3070	3092	3110	3129
Տնային տնտեսություններ	374342	359466	368986	379268	389940
Դրամով	239827	240583	245047	253843	262278
Արտարժույթով	134515	118883	123939	125425	127662
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	12191	12269	12808	12868	13142
Դրամով	971	947	1119	1112	1110
Արտարժույթով	11220	11322	11689	11756	12032
Այլ ֆինանսական կազմակերպություններ	18979	18585	17851	17644	19612
Դրամով	15755	15439	14562	14500	15358
Արտարժույթով	3223	3146	3289	3144	4254
Զուտ այլ ակտիվներ	-275763	-271888	-281448	-290485	-292908
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	23540	21413	24043	24115	24088
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	22861	31078	36691	36909	38605
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-20743	-29006	-36366	-36597	-38282
Ներդրումներ փայաբաժիններում	2320	2458	2489	2516	2561
Միջբանկային պահանջներ	50498	40848	32517	41688	41430
Այլ ակտիվներ	170554	162896	164395	170173	159882
Միջբանկային պարտավորություններ (-)	-50133	-40594	-29120	-40412	-40939
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-9323	-5531	-5629	-5690	-5740
Կապիտալ հաշիվներ (-)	-320573	-320602	-326696	-336546	-338281
Այլ պարտավորություններ (-)	-144763	-134849	-143774	-146642	-136231
ԱՎԱՆԴՆԵՐ	**593025**	**593003**	**608691**	**635920**	**627779**
Դրամով ավանդներ	212805	201800	212427	218917	211981
Ցպահանջ ավանդներ	128070	112992	117722	123456	112992
Ժամկետային ավանդներ	84735	88808	94706	95461	98990
Արտարժույթով ավանդներ	380220	391203	396263	417003	415797
Ցպահանջ ավանդներ	105179	103809	100544	119056	106711
Ժամկետային ավանդներ	275041	287395	295719	297947	309086

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010	2011			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-26185**	**-32256**	**-33352**	**-32137**	**-35605**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	162	178	199	1523	1138
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-19716	-25702	-26108	-26288	-26600
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-6632	-6732	-7443	-7372	-10142
ԶՆԱ	**38574**	**44606**	**47704**	**47142**	**50767**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-4704	-4662	-4962	-5209	-5450
Պահանջներ Կառավարության նկատմամբ	758	831	534	467	409
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-5462	-5494	-5496	-5676	-5859
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	19515	25859	26707	27755	27139
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	21665	27766	28611	29822	29380
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ (-)	-2150	-1908	-1905	-2066	-2241
Տնտեսություն	60105	59964	60984	64122	65314
Ձեռնարկություններ	16644	16336	16221	16939	16759
Դրամով	6905	6689	6770	7175	7262
Արտարժույթով	9739	9648	9450	9764	9497
Արժեթղթեր	0	0	0	0	0
Տնային տնտեսություններ	43311	43482	44618	47041	48423
Դրամով	30195	30674	31657	33192	34187
Արտարժույթով	13116	12808	12962	13849	14236
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	132	129	128	126	117
Դրամով	60	60	58	57	56
Արտարժույթով	72	69	69	69	61
Այլ ֆինանսական կազմակերպություններ	18	17	17	16	15
Դրամով	11	11	10	10	9
Արտարժույթով	7	7	6	6	6
Զուտ այլ ակտիվներ	-36342	-36554	-35024	-39526	-36236
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	45	50	43	1745	48
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0	0	0	0
ՀՀ դրամ դրամարկղում	219	225	306	236	248
Ներդրումներ փայաբաժիններում	1678	1678	1678	4	1678
Պահանջներ վարկային կազմ-ների նկատմամբ	1526	1707	1647	1724	1900
Այլ ակտիվներ	3332	3666	3738	3859	3604
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-1552	-1623	-1630	-1724	-1900
Թողարկված պարտատոմսեր (-)	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ (-)	-36013	-36029	-36229	-41474	-37649
Այլ պարտավորություններ (-)	-5576	-6230	-4577	-3896	-4166
